Մասնագիտական կրթական ծրագրի ընդհանուր նկարագիր	
Ծրագրի անվանումը	101401.02.6 «Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա»
Ընդհանուր նկարագրությունը	Կրթական ծրագիրը կառուցված է հետևալ հիմնական կրթամասերից. Ծրագիրը բաղկացած է հետևյալ հիմնական կրթամասերից՝ 1. Ընդհանուր կառուցամաս, 2. Ընդհանուր մասնագիտական կառուցամաս, 3. Հատուկ մասնագիտական կառուցամաս, 4. Կամընտրական առարկաներ, 5. Մասնագիտական պրակտիկա: Ավարտական կուրսում ուսանողները անցնում են մասնագիտական /կլինիկական/ պրակտիկա՝ հանրապետության լավագույն վերականգնողական կենտրոններում: Պրակտիկային հատկացվում է 24 կրեդիտ: Կրթական ծրագիրն ավարտվում է ավարտական աշխատանքի հրապարակային պաշտպանությամբ, որի նպատակն է տեսական, գործնական, հետազոտական, մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումը՝ ըստ կրթական ծրագրի վերջնարդյունքների: Ավարտական աշխատանքի կատարմանը տրվում է 10 կրեդիտ: Ծրագիրը ներառում է պարտադիր դասընթացներ ընդհանուր հումանիտար, սոցիալական, մանկավարժական, հոգեբանական ոլորտներից, մասնագիտական /կլինիկական/ պրակտիկաներ, ինչպես նաև կամընտրական առարկաներ: Ուսման տևողությունը 4 տարի է՝ 8 կիսամյակ, յուրաքանչյուր կիսամյակ՝ 20 շաբաթ, որից 4 շաբաթ՝ քննությունների համար: Ծրագիրը ներառում է մի շարք առանցքային դասընթացներ, որոնց կազմում են հատուկ մասնագիտական կառուցամասի բլոկը՝ «Կինեզիոլոգիայի հիմունքներ», «Առողջարարական ֆիզկուլտուրա», «Մերսման հիմունքներ», «Ռեաբիլիտացիայի հիմունքներ» «Նյարդային համակարգի հիվանդությունների կինեզիոթերապիա», «Վնասվածքների ֆիզիկական ռեաբիլիտացիա» և այլն: Ծրագրում ընդգրկված են նաև ընդհանուր մասնագիտական կառուցամասի առարկաներ՝ «Մարդու անատոմիա», «Ընդհանուր և տարիքային ֆիզիոլոգիա», «Ընդհանուր և մասնակի ախտաբանություն», «Սպորտային բժշկություն», «Կենսամեխանիկա», «Կենսաքիմիա» և այն:
Ուսումնական պլանը	https://sportedu.am/wp-content/uploads/2026/04/Կինեզիոլոգիա-առկա-բակալավր-25-26.pdf
Շնորհվող աստիճանը	Սպորտի բակալավր

ՈԱԾ մակարդակը	Որակավորումների ազգային շրջանակի 6-րդ մակարդակ
Կրեդիտները	240
Ուսուցման ձևը	Առկա
Ծրագրի տևողությունը	4 տարի
Դասավանդման լեզուն	Հայերեն
Ուսման վարձը	550 000 ՀՀ դրամ
Վերջնարդյունքը	Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Ա.1 Ներկայացնել հենաշարժողական համակարգի հետ կապված առողջական խնդիրների և վնասվածքների զարգացման ընդհանուր մեխանիզմը և դրսևորումները: Ա.2 Պարզաբանել անձի զարգացման անատոմիական, ֆիզիոլոգիական, կենսամեխանիկական, հոգեբանական, մանկավարժական առանձնահատկություններն և օրինաչափությունները: Ա.3 Բացատրել ֆիզիկական վերականգնման տարբեր մեթոդները և դրանց ազդեցության մեխանիզմները: Ա.4 Լուսաբանել մարդու շարժողական գործառույթների փոխակերպումների վերաբերյալ գիտելիքներ: Ա.5 Հիմնավորել մարդու ֆիզիկական ակտիվության դերն առողջության հետ կապված խնդիրների և վնասվածքների կանխարգելման գործում: Բ. Մասնագիտական գործնական կարողություններ և հմտություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Բ.1 Իրականացնել հենաշարժողական համակարգի ֆունկցիոնալ վիճակի հետազոտում և անել եզրակացություն: Բ.2 Ինքնուրույն մշակել ֆիզիկական վերականգնման միջոցառումների համալիր և կիրառել տարբեր օրգան-համակարգերի հիվանդությունների դեպքում: Բ.3 Ցուցաբերել առաջին բուժօգնություն և արտակարգ իրավիճակներում կիրառել նախընտրելի գործողություններ:

	Բ.4 Մասնագիտական գործունեություն պլանավորելու, իրականացնելու և գնահատելու, մասնագիտական ոլորտին առնչվող հետազոտություններում փորձարարական տվյալներ հավաքագրելու, մշակելու և մեկնաբանելու նպատակով տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաները կիրառելու կարողություն: Բ.5 Թիմում աշխատելու, աշխատանքի կազմակերպման և արդյունքների համար պատասխանատվություն ստանձնելու և գիտելիքների կիրառման կարողություն: Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ և հմտություններ Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի. Գ.1 Իրականացնել ֆիզիկական դաստիարակության, սպորտի, ակտիվ ժամանցի տարբեր միջոցառումներ: Գ.2 Նկարագրել ճշգրիտ, հումանիտար գիտություններ՝ ֆիզիկական կուլտուրայի և դաստիարակության ոլորտում կիրառելու նպատակով: Գ.3 Վերլուծել, մեկնաբանել գիտական գրականություն և կատարել գիտականորեն հիմնավորված եզրահանգումներ: Գ.4 Օտար լեզուն կիրառել որպես հաղորդակցման միջոց:
Աշխատաշուկան	Բակալավրը բուհն ավարտելուց անմիջապես հետո կարող է աշխատել 1. նախակրթական և կրթական հաստատություններում, 2. բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ (ուսումնաօժանդակ կազմում), 3. առողջարարական կենտրոններում, 4. մարզաառողջարարական ակումբներում, 5. ազգային հավաքական թիմերում, 6. սպորտային ֆեդերացիաներում, 7. մարզական ակումբներում, 8. մարզադպրոցներում, 9. առողջարաններում, 10. հանգստյան տներում, 11. հասարակական սոցիալական կազմակերպություններում, 12. մանկատներում, 13. ծերանոցներում:

	Բակալավրի որակավորում ստանալուց հետո սովորողը համապատասխան գործող կարգի ուսումը կարող է շարունակել մագիստրատուրայում: Հնարավորություն է ընձեռնվում գործունեությունը շարունակել. • *ստացիոնար և ամբուլատոր կլինիկական հաստատություններում,* • *պետական և մասնավոր վերականգնողական կենտրոններում,* • *բուժական-կանխարգելիչ հիմնարկներում,* • *դիսպանսերներում,* 101401.00.06 Առողջարարական ֆիզիկական կուլտուրա՝ կինեզիոլոգիա մասնագիտությամբ բակալավրը կարող է աշխատել վերը նշված հաստատություններում, որպես՝ ֆիզիկական թերապիստ: